Արձանագրություն N 3
«ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2025-06» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

21 օգոստոսի 2025թ.
ժամը 11:30

| | |
|---|---|
| Մասնակցում էին հանձնաժողովի | |
| Նախագահ՝ | Ալմաստ Հարոյան |
| Անդամներ՝ | Նաիրա Խաչատրյան |
| Քարտուղար՝ | Վարդան Հովհաննիսյան |
| Բացակայում է՝ | Արամ Երիցյանը |

1. **Հրավերի վերաբերյալ հարցումների և տրված պարզաբանումների վերաբերյալ**
**ա/** հրավերի վերաբերյալ պարզաբանում ստանալու համար հարցումներ չեն ստացվել,
**բ/** հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. **«ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2025-06» ծածկագրով ընթացակարգի հայտերի ներկայացման վերաբերյալ.**
Գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից 21.08.2025թ. ժամը 11:30-ին փակվել է հայտերի գրանցամատյանը և հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու պահին հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

2.1 **Հայտեր ներկայացրած մասնակիցները՝**

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի տվյալները |
|---|---|---|
| 1. | «Գլաքսոսմիթկլայն էքսպորտ լիմիթիդ» - ոչ ռեզիդենտ | Միացյալ Թագավորություն, ք.Լոնդոն, փ.Նյու Օքսվորդ 79, հեռ. +44 7721017542, tatsiana.i.salonka@gsk.com |
| 2. | «Սանարե-Ֆարմ» ՍՊԸ - ռեզիդենտ | ք.Արտաշատ, Օգոստոսի 23փող., 23շ., 13/1, հեռ. 091 403299, sanare2008@gmail.com |
| 3. | «ԳԵՖԱ» ԲԸ – ոչ ռեզիդենտ | Վրաստան, ք.Թբիլիսի, Ս.Ցինցաձե 24ա, հեռ. 093 360750, +995 32 2911900, info@gepha.com |

2.2 **Տվյալներ ծրարը կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.**
Մասնակից ընկերությունների կողմից ներկայացված ծրարները կազմված են **«ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2025-06»** ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

2.3 **Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**
**«ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2025-06»** ծածկագրով մրցույթի մասնակից ընկերությունների փակ կնքված ծրարներով ներկայացրել են.

- ✓ Դիմում հայտարարություն գնման ընթացակարգին մասնակցելու (Հավելված 1)
- ✓ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր (Հավելված 1.1)
- ✓ գնային առաջարկ (Հավելված 2)
- ✓ հայտի ապահովում:

Վերոնշյալ ընկերությունների կողմից ներկայացված փասթաթղթերը կազմվել են բնօրինակից և պատճենից, փաստաթղթերի բոլոր էջերը կնքված և ստորագրված են մասնակիցների կողմից:

2.4 **Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի սահմանված պահանջներին համապատասխան կազմած լինելու մասին.**
Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված են **«ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2025-06»** ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

2.5 **Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ /ՀՀ դրամ/**
Մասնակիցների գնային առաջարկները հետևյալն են.
Բացման նիստի օրվա դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքը հետևյալն է՝ 1 USD - 382.77 դրամ:

***Չափաբաժին 1՝*** Ջրծաղիկի դեմ պատվաստանյութ /երեխաների և մեծահասակների համար/

| h/h | Մասնակցի անվանումը | **Գնման գինը՝** 650 000 000,0 ՀՀ դրամ | | |
|---|---|---|---|---|
| | | **Մասնակիցների կողմից առաջարկված գները՝** | | |
| | | Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ | ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գինը |
| 1 | «Գլաքսոսմիթկլայն Էքսպորտ լիմիթիդ» | 1 625 000 ԱՄՆ դոլար<br>622 001 250 դրամ | - | 1 625 000 ԱՄՆ դոլար<br>622 001 250 դրամ |
| 2 | «Սանարե-Ֆարմ» ՍՊԸ | 640 250 000 դրամ | | 640 250 000 դրամ |

***Չափաբաժին 2՝*** Ջրծաղիկի դեմ պատվաստանյութ /երեխաների համար/

| h/h | Մասնակցի անվանումը | **Գնման գինը՝** 150 000 000,0 ՀՀ դրամ | | |
|---|---|---|---|---|
| | | **Մասնակիցների կողմից առաջարկված գները՝** | | |
| | | Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ | ԱԱՀ | Առաջարկված ընդհանուր գինը |
| 1 | «Գլաքսոսմիթկլայն Էքսպորտ լիմիթիդ» | 375 000 ԱՄՆ դոլար<br>143 538 750 դրամ | - | 375 000 ԱՄՆ դոլար<br>143 538 750 դրամ |
| 2 | «ԳԵՖԱ» ԲԸ | 257 550 ԱՄՆ դոլար<br>98 582 413.5 դրամ | - | 257 550 ԱՄՆ դոլար<br>98 582 413.5 դրամ |

3. **Հայտերի գնահատման վերաբերյալ.**
ա/ հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում «Գլաքսոսմիթկլայն Էքսպորտ լիմիթիդ», «Սանարե-Ֆարմ» ՍՊԸ և «ԳԵՖԱ» ԲԸ կողմից ներկայացված հայտերում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ չեն արձանագրվել:

Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացրած գնահատման թերթիկները

4. **Հանձնաժողովը որոշեց.**
**ա/** «ԲՄԱՊՁԲ-ՀՎԿԱԿ-2025-06» ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել՝ «Գլաքսոսմիթկլայն Էքսպորտ լիմիթիդ» ընկերությանը: 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել՝ «ԳԵՖԱ» ԲԸ-ին:
**բ/** Հրավերով սահմանված կարգով և ժամկետներում պայմանագիր կնքելու առաջարկություն ներկայացնել «Գլաքսոսմիթկլայն Էքսպորտ լիմիթիդ» ընկերությանը և «ԳԵՖԱ» ԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝
Կողմ՝ 2 Դեմ՝ 0

**Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ստորագրությունները**

Հանձնաժողովի Նախագահ՝ ____________ Ալմաստ Հարոյան

Անդամներ՝ ____________ Նաիրա Խաչատրյան

Քարտուղար՝ ____________ Վարդան Հովհաննիսյան